ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Սիս համայնք, գ. Սիս, հեռ. 077-200-720
էլ.փոստ - sis-hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 20 » Մայիսի 2013 թվականի N 08

ՍԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՆԵՐՏՆՏԵՍԱՅԻՆ ԶՐԱՆՑՔՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակարավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 16 -րդ հոդվածի 5-րդ կետի դրույթներով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Մասնակցել ներդրումային ծրագրին՝ շինարարական աշխատանքների 15 % -ի համաֆինանսավորման պայմանով:
2. Հաստատել ներկայացված վերանորոգման ենթակա հետևյալ ջրանցքները. Սիս համայնքի հարավ-արևելյան տարածքի թիվ 1 շատրվանող հորատանցքից սնվող L= 2000 գծմ երկարությամբ ջրատարը:
3. Առաջնահերթության կարգով վերականգնել Սիս համայնքի հարավ-արևելյան տարածքի թիվ 1 շատրվանող հորատանցքից սնվող L= 2000 գծմ երկարությամբ ջրատարը:

Վերը նշված ջրանցքների վերջնական առաջնահերթությունը կհաստատվի ՋՕԸ-ի վարչական խորհրդի նիստի կողմից, ջրանցքների տեխնիկա -տնտեսական ցուցանիշների հիման վրա, որոնք կհաշվարկվեն ՋՕԸ-ի կողմից:

Ավագանու անդամներ՝

Կողմ (4) **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ն. Սեյրանյան
Ա. Բեգունց
Հ. Մելքոնյան
Ռ. Աթասյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ԵՂՅԱՆ**

2013 թ. Մայիսի 20
գ. Սիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Սիս համայնք, գ. Սիս, հեռ. 077-200-720
էլ.փոստ - sis-hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 20 » Մայիսի 2013 թվականի N 09 -Ն

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱԿՏՈՐՆԵՐԸ ԱՃՈՒՐԴ - ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդ-վածի, «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդված 1- ին մասի 20-րդ կետի դրույթներով և Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի » 63 հոդված 3-րդ և 67 հոդված 2-րդ կետերի պահանջներով Սիս համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի անշարժ գույքի հատագծին համապատասխան գյուղնշանակության խոտհարք ծածկագիր /03-083-0109-0072 / հողամասից առանձնացնել մեկ միավոր 0. 83323 հա հողակտոր և մեկ միավոր բնակավայրի հասարակական կառուցապատման ծածկագիր / 03-083-0632-0002 / 0. 01254 հա հողակտոր աճուրդ-վաճառքի միջոցով օտարելու նպատակով:

1. Համայնքային սեփականություն համարվող 0. 83323 հա գյուղնշանակության խոտհարք և 0. 01254 հա բնակավայրի հասարակական կառուցապատման հողակտորները աճուրդ-վաճառքի միջոցով օտարել:
2. Օտարվող հողամասերի մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 100% - ի չափով:
3. Օտարվող հողամասի առավելագույն չափ սահմանել 0. 83323 հա, 0. 01254 հա :
4. Քայլի չափը սահմանել նվազագույնը ՝ 20,0 հազ.դրամ:

Ավագանու անդամներ՝

Կողմ (4) **Դեմ (0)** **Ձեռնպահ(0).**

Ն.Սեյրանյան
Ա. Բեգունց
Հ. Մելքոնյան
Ռ. Աթասյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՝ ԱՐՄԵՆ ԵՂՅԱՆ

2013 թ. Մայիսի 20
գ. Սիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Սիս համայնք, գ. Սիս, հեռ. 077-200-720
էլ.փոստ - sis-hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 20 » Մայիսի 2013 թվականի N 10 – Ն

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 2-ՐԴ ԿԱՐԳԻ ԽՈՏՀԱՐՔԻՑ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական Ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության Օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Հողային Օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ կետի դրույթներով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի անշարժ գույքի հատագծին համապատասխան / ծածկագիր 03-083-0108/ գյուղնշանակության 2-րդ կարգի խոտհարքից առանձնացնել երկու միավոր հողակտոր՝ 0.91694 հա , 1,92955 հա և 24 տարի ժամկետով տալ վարձակալության:

Ավագանու անդամներ՝

Կողմ (4) **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ն. Սեյրանյան
Ա. Բեգունց
Հ. Մելքոնյան
Ռ. Աթայան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ԵՂՅԱՆ**

2013 թ. Մայիսի 20
գ. Սիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Սիս համայնք, գ. Սիս, հեռ. 077-200-720
էլ.փոստ - sis-hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ու Մ

« 20 » Մայիսի 2013 թվականի N 11 – Ն

ՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 Թ-Ի ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներով հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը ՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

Հաստատել Սիս համայնքի 2013 թ-ի վարչական և ֆոնդային բյուջեում կատարված հետևյալ փոփոխությունները :

2013 թ-ի վարչական բյուջեի եկամտային մասը, այլ դոտացիաներ եկամտատեսակի գծով ավելացնել 4902.0 հազար դրամով: 2013 թ-ի վարչական բյուջեի ծախսային մասի 9.1.1 – Նախադպրոցական կրթություն հատվածի 4511 – Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական կազմակերպություններին հոդվածը ավելացնել 4902.0 հազար դրամով:

2013 թ-ի վարչական բյուջեի ծախսային մասի 11.1.2 – ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ հատվածի 4891 – Պահուստային միջոցներ հոդվածը պակասեցնել 1000.0 հազար դրամով:

1.6.1 – Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ հատվածի 4267 – Կենցաղային և հանրային սննդի նյութեր հոդվածը ավելացնել 700.0 հազար դրամով:

10.7.1 – Սոցիալական հատուկ արտոնություններ հատվածի 4729 - Այլ նպաստներ բյուջեից հոդվածը ավելացնել 300.0 հազար դրամով:

2013 թ-ի ֆոնդային բյուջեի ծախսային մասի 4.5.1 – Ճանապարհային տրանսպորտ հատվածի 5112 – Շենքերի և շինությունների կառուցում հոդվածը պակասեցնել 2750.0 հազար դրամով, իսկ նույն հատվածի 5113 – Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում հոդվածը ավելացնել 950.0 հազար դրամով:

1.6.1 – Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ հատվածի 5122 – Վարչական սարքավորումներ հոդվածը ավելացնել 1800.0 հազար դրամով:

Ավագանու անդամներ՝

Կողմ (4) **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ն.Սեյրանյան
Ա. Բեգունց
Հ. Մելքոնյան
Ռ. Աթայան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ԵՂՅԱՆ**

2013 թ. Մայիսի 20
գ. Սիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Սիս համայնք, գ. Սիս, հեռ. 077-200-720
էլ.փոստ - sis-hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 20 » Մայիսի 2013 թվականի N 12

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄՇԱԿՎԱԾ ՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՏԱՐԲԵՐԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Արարատի մարզպետի 08.05.2013 թ-ի N 1/8/2/2207-13 գրությամբ հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը ՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել Սիս համայնքի աշխատակազմի նոր օրինակելի կանոնադրությունը :
2. Ուժը կորցրած ճանաչել գործող կանոնադրությունը:

Ավագանու անդամներ՝

Կողմ (4) **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ն. Սեյրանյան
Ա. Բեգունց
Հ. Մելքոնյան
Ռ. Աթասյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ԵՂՅԱՆ**

2013 թ. Մայիսի 20
գ. Սիս